

77. ԾԾՄԱՐՏԱԽՈՍ ՄԱՐԴ

Ժամանակով քաղքի մե մեջ մարդ մե կէղնի, օր կը խոսեր, թագավոր լե էղներ, խոսքն օր չիգեր վըր լեզվին, շըր քաշվի, ճակտին կը զարկեր: Անուն կը դնին ճշմարտախոս:

Օրերուց օր մե՝ մարդ կը տեսնա, օր ուր գրկեցի տնեն հանդե չէրկեն բաժ, խըշտ պեխերով մարդ մե գելնա: «Ըհը՛,—կըսե ուրին-ուրին,—կա-չկա՝ ըդի ֆլան կնկա սիրողն է»: Եր հասու կէղնի, կէրթա մարդուն կըսե.

— Հա՛յ, քու կնիկ ծուռ ճամպով կէրթա:

— Ի՞նչ կըսիս, շուն-շան որդի,—կը հեռոտի մարգ:

— Մը՛ բոռա. գուզի՞ս տեսնանք ու հասու էղնինք, օր քու կնիկ ուր չերես կը սեցու:

— Հա՛,— կըսե,— հասու էղնինք:

էդ մարդ ու կնկա մարդ կը մտնան տուն, պալտըվին սան մե չետե, խել մե գընցնա՝ կը տեսնան, օր հանդե չէրկեն բաժ, խըշտ պեխերով մարդ մե ներս մտավ, զձեռքի պզտիկ բողչեն դրեց վըր սեղնին, բռնեց, գրկեց կնկան, քանի մ՛հեղ պագեց, ուր գործ տեսավ ու ճիտու պես հպարտ-հպարտ դուս գնաց:

— Տեսա՞ր:

— Տեսա. վոլա ես ըդրան պտի սպանիմ:

— Չէ՛: Ահսոս չի՞ս դառնաս մարդասպան: Քե՛լե էրթանք դատավորին:

Կէրթան մըտ դատավոր: Կնկա մարդ կըսե.

— Արդար դատավոր, ըշտե հմլա-հմլա բան. իմ կնիկ բողու-թեն կէնե, իդա մարդ լե շհադ, մկա ի՞մալ էնիմ:

Գատավոր գրնկնա մըշ մտքին, զճակատ կը շփե, զգլուխ կը վերցու կըսե.

— Լա՛ո, բոզն օր չուզե՝ բողոթեն կէնե դատի ժամանակ՝ դատավորի հետ: Ըդի անզգամի մեկ շեշիդն է: Մինակ մեկ ճար կա. զձըզի պտի բաժնիմ, խաբո՛ւլ իս:

— Խաբուլ իմ:

Գատավոր կը բաժնե զմարդ, ու կնիկ: Մարդ կէրթա ուրիշ կնիկ մե կաննե, հմա կըսին՝ քանի օր աչք վախեցեր էր, նոր կնկան կիշկեր գիշեր-ցերեկ: Օր թե բան մ'էղներ՝ Ճշմարտախոս մարդ կըսեր մըզի, հմա շուրի չըսօր բան չըսեր:

